ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՏՆՕՐԵՆ

N ՏԾԻԳ 818
«28» 11 2014թ.

«ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տրաասպորտի և կապի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված աշխատանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-11/3-ՏԿՆ-14/22»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան 2014 թվականի դեկտեմբերի 9-ը, 15:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Տիգրան Ջանոյանը:

Հայտերը կբացվեն կայքի միջոցով 2014 թվականի դեկտեմբերի 9-ին, 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N307 սենյակ հասցեում:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար Հայաստանի Հանրապետությունում ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնների վկայագրման ժամկետը նշող կտրոնների տպագրական աշխատանքների ձեռքբերումը:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար Հայաստանի Հանրապետությունում ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնների վկայագրման ժամկետը նշող կտրոնների տպագրական աշխատանքների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցը պետք է ներառված լինի տպագրության համար «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագիր կնքած անձանց ցուցակում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

**1) «Պիտանելիության չափորոշիչ».**

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

**2) «Ֆինանսական չափորոշիչ».**

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերով (ծանուցմամբ) նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով (գնման էլեկտրոնային եղանակ) սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ tjanoyan@transportpiu.am:

Հարգանքով՝

Է. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատարող*
*Գնումների և պայմանագրերի*
*կառավարման բաժնի պետ՝ Տ. Ջանոյան*
*հեռ. (+37410) 59-00-20*